Կարգապահական գործ թիվ 19243

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի օգոստոսի 11-ի թիվ 96-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/75-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՄՈՒԽՍԻԿԱՐՈՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանյի, Կարեն Մեժլումյանի, Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի (արտոնագիր՝ 1233) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Կարինե Սիմոնյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է հետևյալը.

2018թ. հունիս ամսին Դիմողը դիմել է փաստաբան Արմեն Մուխսիկարոյանին (**այսուհետ՝ նաև Պատասխանող**)՝ որպես խարդախության հետևանքով տուժած անձ, որպեսզի Արմեն Մուխսիկարոյանն իրականացնի իր շահերի պաշտպանությունը: Արմեն Մուխսիկարոյանը Դիմողին տվել է երաշխիք, որ գործը կշահի, և Դիմողը հետ կստանա խարդախությամբ իրենից հափշտակված 50,000 ԱՄՆ դոլար գումարը՝ նշելով, որ ինքը որևէ տանուլ տված գործ չունի և բերելով իր հաղթած գործերից օրինակներ:

20.06.2019թ. Դիմողի և Արմեն Մուխսիկարոյանի միջև կնքվել է ծառայության մատուցման պայմանագիր, փաստաբանական ծառայության գին է սահմանվել 5,000 ԱՄՆ դոլար, որից 300 ԱՄՆ դոլարը Դիմողը վճարել է տեղում, 1,000 ԱՄՆ դոլարն Արմեն Մուխսիկարոյանին վճարվել է մինչև 30.07.2018թ., իսկ 4,000 ԱՄՆ դոլարը պետք է վճարվեր Դիմողի գումարի ստացման օրը:

Ըստ պայմանավորվածության՝ Արմեն Մուխսիկարոյանը պետք է Դիմողի գործով

զբաղվեր պայմանագրի կնքման օրվանից, սակայն Հայաստանի Հանրապետության դատախազություն հանցագործության մասին հաղորդումը մուտք է արվել շուրջ երկու ամիս անց: Հաղորդման հիման վրա նյութերի նախապատրաստման ընթացքում Արմեն Մուխսիկարոյանը միայն մեկ անգամ Դիմողի հետ գնացել է Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղ Դիմողը բացատրություն է տվել:

03.09.2018թ. Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչ Կ. Մարուքյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Գործի անհաջող ընթացքից Դիմողի մտահոգությանն ի պատասխան՝ Արմեն Մուխսիկարոյանը հավաստիացրել է, որ ձևն այդպես է, ինքը կդիմի դատախազին, և ամեն ինչ լավ է լինելու: Երբ Դիմողը կրկին հետաքրքրվել է գործի ընթացքի վերաբերյալ, Արմեն Մուխսիկարոյանն ասել է, որ դիմել է դատախազին: Որոշ ժամանակ անց Դիմողը տեղեկացել է, որ Արմեն Մուխսիկարոյանը բողոք է ներկայացրել դատարան: Բողոքի քննությանն Արմեն Մուխսիկարոյանի հետ մասնակցելու ընթացքում Դիմողը հասկացել է, որ փաստաբանը խեղաթյուրել է իր ներկայացրած փաստարկները, դրանց մի մասը չի ներկայացրել քննությանը, խաբել է իրեն, ներառյալ՝ բողոք է ներկայացրել դատախազին, թույլ է տվել այնպիսի խախտումներ, որոնց արդյունքում Դիմողի հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժվել է, և մերժվել է նաև դատարան ներկայացված բողոքը: Մասնավորապես, դատարանը, մերժելով փաստաբանի բողոքը, մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Արմեն Մուխսիկարոյանը բողոք է բերել դատարան՝ առանց նախ դատախազին հետաքննիչի որոշման դեմ բողոք ներկայացնելու:

Դիմողի կարծիքով Արմեն Մուխսիկարոյանը դիտավորյալ է այնպես արել, որպեսզի Դիմողի հաղորդման հիման վրա քրեական գործ չհարուցվի, իսկ քրեական գործ չհարուցելու դեմ ներկայացված բողոքը մերժվի:

Ի պատասխան գործի ընթացքը պարզաբանելու վերաբերյալ Դիմողի պահանջի՝ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը հավատացրել է, որ նոր հաղորդում է ներկայացրել, դատարանի որոշումը բողոքարկել է վերաքննիչ դատարան և այնտեղ գործի վարույթն իր շնորհիվ կասեցվել է և սպասում է նոր նյութի:

Դիմողը համոզված է, որ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը գործել է մյուս կողմի հետ պայմանավորվածությամբ՝ Դիմողի դեմ:

Ըստ Դիմողի՝ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը խուսափում է իր հետ հանդիպելուց, չի պատասխանում հեռախոսազանգերին, չի վերադարձնում Դիմողի գործի փաստաթղթերը և հոնորարը:

Դիմողը խնդրել է փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և նրան ենթարկել պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.12.2019թ. թիվ 490-Ա/ԿԳ-19243 որոշման հիման վրա Պատասխանողի նկատմամբ «Փաստաբանության մասին օրենքի» **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ.

թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.7.2 ենթակետի (Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Նոր կանոնագիրք**) 2.7.2 ենթակետ), 3.6.1 ենթակետի (Նոր կանոնագրքի 3.6.1 ենթակետ) և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության (Նոր կանոնագրքի 3.8.4 ենթակետի 3-րդ պարբերություն) պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամալյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որում վերահաստատել է Դիմումով հայտնած իր դիրքորոշումը:

Խորհրդի 28.07.2020թ. նիստին ներկայացել են Դիմողն ու իր ներկայացուցիչ Քրիստինե Մոմջյանը: Դիմողի ներկայացուցիչը վերահաստատել է Դիմողի դիրքորոշումը, ինչպես նաև Խորհրդին է ներկայացրել Պատասխանողին ուղարկված հեռախոսային sms հաղորդագրություններ, որոնց համաձայն՝ Դիմողը Պատասխանողին բողոքել է իր գործի վերաբերյալ վերջինիս ոչ պատշաճ վերաբերմունքից, իրեն չզանգահարելուց, չտեղեկացնելուց, պահանջել է հանդիպել և վերադարձնել փաստաթղթերն ու իրեն վճարած գումարը՝ ըստ էության, հայտնելով Պատասխանողի հետ պայմանագիրը լուծելու մասին: Դիմողի ներկայացուցիչը նաև հայտնել է, որ Պատասխանողը չի պատասխանել Դիմողի զանգերին:

Խորհրդի որոշմամբ նշյալ sms հաղորդագրությունները որպես ապացույցները կցվել են կարգապահական գործին, և Խորհրդի նիստը հետաձգվել է ներկայացված նոր ապացույցները Պատասխանողին ուղարկելու համար:

11.08.2020թ. նիստին Դիմողը ներկայացել է և հայտնել որ իր նախորդիվ հայտնած դիրքորոշմանն ու ներկայացված ապացույցներին ավելացնելու ոչինչ չունի:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական վարույթի հարուցման և գործի նախապատրաստման փուլերում Պատասխանողից պահանջվել է բացատրություն, սակայն Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել: Խորհրդի 28.07.2020 և 11.08.2020թ. նշանակված նիստերին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ կերպով ծանուցվել է Խորհրդի նիստերի ժամանակի և վայրի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 10.02.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 14.02.2020 թ., Խորհրդի նիստի օր, ժամ և վայր է նշանակվել, նիստը տեղի է ունեցել 28.07.2020թ.՝ ժամը 19:00-ին և 11.08.2020թ.՝ ժամը 19.00-ին Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի **(այսուհետ՝ նաև Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը հանդիսանում է Դիմող Կարինե Սիմոնյանի փաստաբանը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված պայմանագրի և վճարման անդորրագրերի պատճեններով:*

2. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը Դիմողի գործով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ առանց նախապես այդ որոշումը դատախազին բողոքարկելու: *Նշված փաստը հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննչական բաժանմունքի տեսուչի 03.09.2018թ. որոշման և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2020թ. որոշման պատճեններով:*

3. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը առանձին դեպքերում չի պատասխանել Դիմող Կարինե Սիմոնյանի հեռախոսազանգերին և հեռախոսային sms հաղորդագրություններին՝ չտեղեկացնելով Դիմողին գործի ընթացքի մասին և չպատասխանելով Դիմողի հարցերին, ինչպես նաև պայմանագիրը փաստացի լուծելու մասին Դիմողի ծանուցումից հետո վերջինիս չի վերադարձրել գործին վերաբերող փաստաթղթերը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Դիմողի բացատրությամբ և Դիմողի կողմից Պատասխանողին հասցեագրված հեռախոսային sms*

հաղորդագրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Արմեն Մուխսիկարոյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 8 ավարտված կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ հարուցված 3 կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 26.11.2015թ. թիվ ԿԳ/163-Ա որոշմամբ Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ Կանոնագրքի 2.3.3 ենթակետի խախտման համար կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացի մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով: Նշված տույժը մարվել է:

Խորհրդի 06.12.2017թ. թիվ ԿԳ/116-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման համար Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Նշված տույժը մարվել է:

Խորհրդի 17.12.2018թ. թիվ ԿԳ/226-Ա որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Նշված կարգապահական տույժը մարվել է:

Խորհրդի 29.05.2019թ. թիվ ԿԳ/76-Ա որոշմամբ Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար: Նշված կարգապահական տույժը մարվել է:

Խորհրդի 03.12.2019թ. թիվ ԿԳ/167-Ա, որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Նշված կարգապահական տույժը մարվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, լսելով Դիմողի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Արմեն Մուխսիկարոյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2, 3.6.1 և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության խախտում՝ դրանով իսկ խախտել է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

7.1 Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման մասով

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի սույն դրույթի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճությունը ներառում է մի շարք բաղադրիչների միաժամանակյա առկայություն.

Ա. *իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,*

Բ.*վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,*

Գ.*հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Սույն պարագայում Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանող Արմեն Մուխսիկարոյանը եղել է Դիմողի փաստաբանը և ներկայացրել է նրա շահերը:

Դիմողի շահերը ներկայացնելիս Պատասխանողը քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի որոշումը բողոքարկել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մաը սահմանում է՝ *հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:*

Վերոգրյալից բխում է, որ հետաքննիչի նշյալ որոշումը կարող էր դատական կարգով բողոքարկվել, եթե նախապես այն բողոքարկվել էր դատախազին, և բողոքը վերջինիս կողմից մերժվել էր:

Նման պայմաններում ակնհայտ է, որ Պատասխանողի վարքագծում առկա է 2.7.2 ենթակետի խախտում, քանի որ կամ Պատասխանողը տեղյակ չի եղել վերը նշված իրավական կարգավորման մասին, կամ չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Երկու դեպքում էլ խախտվել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի բովանդակությունը կազմող պարտադիր բաղադրիչներից առնվազն մեկը:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջները չպահպանելու հետևանքով Փաստաբանի կողմից ներկայացված բողոքը դատարանի կողմից մերժվել է, ինչպես նաև բաց են թողնվել նաև դատախազին բողոք ներկայացնելու քրեադատավարական ժամկետները:

Վերոշարադրյալի հիման վրա ակնհայտ է, որ Պատասխանողը բարեխիղճ իրավաբանական օգնություն չի տրամադրել Դիմողին՝ պատշաճ խորությամբ և

արհեստավարժությամբ չուսումնասիրելով նրա իրավական խնդրի լուծման ուղիները, որոնք նախատեսված են ՀՀ գործող օրենսդրությամբ, ինչպես նաև չձեռնարկելով հանձնարարության պատշաճ կատարմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ:

Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ *այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:*

Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի վերոհիշյալ արարքը Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետի իմաստով նույնպես խախտում է համարվում, հետևապես, Արմեն Մուխսիկարոյանի արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 2.7.2 ենթակետով:

*****

7.2 Կանոնագրքի 3.6.1 և 3.8.5 ենթակետերի 3-րդ պարբերության խախտման մասով.

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնի բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր

փաստաբանից:

Սույն պարագայում հաստատված է համարվում այն փաստը, որ Պատասխանողը չի պատասխանել Դիմողի հեռախոսազանգերին և հեռախոսային sms հաղորդագրություններին: Հաղորդագրությունների բովանդակությունը ուսումնասիրելիս, ակնհայտ է, որ Դիմողը հենց իր գործի վերաբերյալ է խնդրել տեղեկություններ հաղորդել իրեն, ինչը, գործում առկա նյութերի համաձայն, այդպես էլ չի կատարվել փաստաբանի կողմից:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի 3.8.5 կետով սահմանված կանոնի խախտմանը, ապա Դիմողը sms հաղորդագրությամբ գրել է, որ կարիք չունի այլևս խոսել փաստաբանի հետ և խնդրել է հստակեցնել, թե որ օրը և ժամին կարող են հանդիպել, երբ Դիմողը կկարողանա վերցնել փաստաթղթերը և գումարը:

Դիմողի վերը նշված հաղորդագրությունից ըստ էության բխում է պայմանագիրը լուծելու վերջինիս մտադրությունը: Ուստի համապատասխան հաղորդագրությունը ստանալուց հետո Պատասխանողի մոտ ծագել է նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վերադարձնելու պարտականությունը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պատասխանողը թույլ է տվել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության պահանջները:

Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի վերոհիշյալ արարքը Նոր կանոնագրքի 3.6.1 ենթակետի և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության իմաստով նույնպես խախտում է համարվում, հետևապես, Արմեն Մուխսիկարոյանի արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 3.6.1 ենթակետով և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերությամբ:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) տուգանք
5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը՝ որպես հիմնական տույժ և մասնակցություն պարտադիր վերապատրաստման դասընթացներին՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 7.2.5 կետի 1-ին ենթակետի պահանջներով

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանին (արտոնագիր թիվ 1233) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2 ենթակետի, 3.6.1 ենթակետի և 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արմեն Մուխսիկարոյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և մասնակցություն պարտադիր վերապատրաստման դասընթացներին՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

11 օգոստոսի 2020թ.
թիվ ԿԳ/75-Ա
ք. Երևան